

Յիշեցում Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուին

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, որը թեկնածուները պարտաւոր են ներկայացնել Կենտրոնական ընտրական յանձնաժողով, այդ թում `

1. Սահմանուած նմուշով` ԱՀ ԱԺ պատգամաւորի թեկնածուի լրացուած հարցաթերթիկ,
2. Լուսանկար,
3. Անձը հաստատող փաստաթուղթ – անձնագիր,
4. Ինքնակենսագրական,
5. Նախընտրական ծրագիր,
6. 100 (հարիւր) Արեւմտեան Հայաստանի քաղաքացիների ստորագրութիւնների ցուցակ, ովքեր առաջադրում են նրա թեկնածութիւնը` որպէս Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուի գրանցման համար վերոնշեալ անհրաժեշտ փաստաթղթերը խնդրում ենք ուղարկել հետեւեալ հասցեով`

E-mail: parliamentwesternarmenia@gmail.com եւ arminfocenter@mail.ru

Հարցաթերթը` հայերէն, անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն, թուրքերէն եւ արաբերէն լեզուներով, հրապարակում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական հետեւեալ կայքերում.

www.elections-western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info.

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ընտրութիւններին մասնակցելու համար պատգամաւորութեան թեկնածուները պարտաւոր են ունենալ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն եւ սահմանուած կարգով գրանցուել վերոնշեալ կայքերում:

Ծանոթանալու համար կից ներկայացում է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Մշտական յանձնաժողովների ցանկը, որպէսզի թեկնածուն հնարաւորութիւն ունենա ընտրութիւն կատարելու Խորհրդարանի մեկ, կամ մեկից աւելի յանձնաժողովներում իր մասնակցութիւնն ապահովելու եւ գործունէութիւն ծաւալելու համար: